

Հաստատված է  
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի  
խորհրդի 29.04.21թ. որոշմամբ  
Թիվ 123 արձանագրություն

Ներքին աուդիտի եզրակացությունը  
բանկի ներքին հսկողության իրականացման նվազագույն  
պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) ներքին աուդիտի բաժինը Բանկի խորհրդի կողմից հաստատված 2020թ. տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն իրականացրել է տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև Բանկում իրականացվող գործընթացների վերստուգումներ: Իրականացվել է նաև հետստուգումային հսկողություն Բանկի ստորաբաժանումների կողմից այն միջոցառումների իրականացման նկատմամբ, որոնք առաջարկվել են արտաքին աուդիտի ստուգման արդյունքում: Այդ աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել է նաև Բանկում ներքին հսկողության համակարգի համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին: Վերստուգումները և դրանց շրջանակներում ընդգրկվող թեմաների ընտրանքը կատարվել է այնպես, որպեսզի բավարար հիմքեր ձևավորվեն արժանահավատ եզրակացության համար: Հարկ է նշել, որ նոր տիպի կորոնավիրուսի համաճարակի պայմաններում առողջապահական անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ վերստուգումների մի մասն իրականացվել է մասնակի հեռավար եղանակով՝ այցելություններ իրականացվել են վերստուգումների ոչ ամբողջ ժամանակահատվածում, և որոշ ոլորտներ վերստուգվել են, հիմք ընդունելով փաստաթղթերի լուսապատճենները:

Կատարված վերստուգումների ընթացքում ուսումնասիրվել են Բանկի ներքին իրավական ակտերը, դրանց համապատասխանությունը գործող պահանջներին, ինչպես նաև իրականացվող գործառնությունների համապատասխանությունը այդ ակտերի դրույթներին: Նշված գործընթացի արդյունքում արձանագրվել են նաև որոշակի ռիսկեր, խնդիրներ և թերություններ, որոնց լուծումներ տալու և/կամ նվազեցնելու նպատակով դրանք քննարկվել են Բանկի շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների հետ, ապա ներկայացվել են Բանկում գործող հանձնաժողովների և բանկի խորհրդի նիստերի ընթացքում, որի արդյունքում տրվել են համապատասխան հանձնարարականներ: Հանձնարարականների կատարման ընթացքը ևս մշտապես գտնվել է Ներքին աուդիտի ուշադրության կենտրոնում:

Հիմք ընդունելով կատարված վերստուգումների և հետստուգումների արդյունքները, մեր կարծիքով Բանկի ներքին հսկողության համակարգը 2020թ. ընթացքում ընդհանուր առմամբ բավարարել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ»-ի պահանջներին:

Ներքին աուդիտի բաժնի պետ



Ա. Վարժապետյան  
29.04.2021թ.

eFO 82-01-07/1#3